ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

✉ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92
Fax /0322/ 2-07-70

թիվ _____

« _____» _____ 2022 թ.

Ազատություն ռադիոկայանի լրագրող
Կարինե Սիմոնյանին
simonyank@rferl.org

Ձեր 01.06.22թ.-ի տեղեկատվական հարցմանը:

Ներկայացնում եմ տեղեկատվություն հարցմամբ առաջադրված կետերի վերաբերյալ:

Առաջին կետ. մարզպետարանի նկուղի դուռը կապարակնքված է եղել ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային վարչության կողմից քրեական գործ հարուցելու օրվանից մինչև գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշման կայացնելը. ըստ որոշման այն կարճվել է հանցակազմի բացակայության հիմքով:

Երկրորդ կետ. նկուղի դուռը բացելուց հետո այնտեղ հայտնաբերվել են դեպքի վայրի զննության մասին կազմված արձանագրությամբ գույքագրման ժամանակ որպես իրեղեն ապացույցներ ճանաչված ապրանքները: Նշված ապրանքների քանակի և անվանման հետ կապված հայտնում եմ, որ այս ապրանքները հիմնականում հաշվառվել են կիլոգրամներով, իսկ քանակը կազմել է մոտ 300 կգ:

Երրորդ կետ. նկուղում եղած իրերը բոլորն էլ կարող էին համարվել առաջին անհրաժեշտության ապրանքներ և որևէ կասկած առաջացնող իրեր չեն եղել:

Չորրորդ և հինգերորդ կետեր. նկուղում եղած ապրանքները բաշխվել են սոցիալապես անապահով և կարիքավոր բնակչությանը՝ ստացականներով և ստորագրություններով, որոնց ցուցակները չենք կարող տրամադրել Ձեզ՝ անձնական տվյալների պաշպանության հիմքով և դրանք ոչ մի տեղ չեն հրապարակվել:

<u>Վեցերորդ</u> կետի վերաբերյալ պարզաբանում կարող եք ստանալ իրավապահ մարմիններից, որոնք իրականացրել են քրեական գործով վարույթ և կարճել են այն հանցակազմի բացակայության հիմքով:

<u>Յոթերորդ կետի վերաբերյալ.</u> հումանիտար օգնության բաշխումը կասեցվել էր քրեական գործ հարուցելու և գույքի վրա արգելանք դնելու հիմքով, որը ինչպես նշվեց՝ հետագայում վերացվել էր:

03/06/2022

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ